«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ անգլերեն

Մասնակից՝ Գոհար Հարությունյան

Ղեկավար՝ Գայանե Վարդանյան

Թեմա՝ Օտար լեզվով ուսումնական նախագծի իրականացումը VII դասարանում

Երևան, 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……..3
ԳԼՈՒԽ 1. Ի՞նչ է նածագծային
ուսուցումը…….……5
ԳԼՈՒԽ 2. Նախագծային աշխատանքի իրականացումը VII
դասարանում……..10
Եզրակացություն……...16
Օգտագործված գրականության
ցանկ……..17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տեխնոլոգիական հմտությունները նորանոր հնարավորություններ են տալիս առավել արդյունավետ դարձնելու ուսուցումը մեր կրթական միջավայրում, հատկապես օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Նախագծերի մեթոդն ունի մի շարք առավեություններ՝ սովորողների մոտ առավել լավ են բացահայտվում հետազոտական հմտությունները, իրականացվում է տեղեկատվության ինքնուրույն փնտրում և գիտելիքների համալրում:

Ինչպես մանկավարժության տեսության մեջ,այնպես էլ գործնականում այսօր մշտապես քննարկվում է աշակերտակենտրոն ուսուցման գործնթացի ապահովման հիմնախնդիրը՝ որպես արդյունավետ կրթադաստիարակչական գործընթացի երաշխիք: Այս մեթոդների հիմքում աշակերտների ակտիվ մասնակցությունն է գիտելիքների ձեռքբերման գործընթացին, նրանց ստեղծագործական-նորարարական գործունեությունը:

Թեմայի արդիականությունը.

Ընտրված թեման այսօր արդիական և հետաքրքիր է, քանի որ բազմաթիվ ուսուցիչներ և աշակերտներ դեռևս դժվար են պատկերացնում, թե գործնականում ինչպես կարելի է պատրաստել նախագիծ: Մեր հետազոտական աշխատանքի երկրորդ գլխում ներկայացված են նախագծային աշխատանքի օրինակներ, որոնք իրականացվել են VII դասարանում անգլերեն առարկայից:

Անտարակույս, կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է լինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ հասարակության բարեկեցության համար անձնական պատասխանատվությունը: Այս տեսանկյունից, հատկապես նախագծային գործունեությունն, ըստ մեզ, համապատասխանում է կրթության նոր խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների տարրերից մեկը: **Հետազոտության նպատակը.**

Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի շուրջ աշխատելիս մեր նպատակն է եղել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրման ճանապրհով հետազոտել նախագծային մեթոդի կիրառման հնարավորությունները և ձևերը VII դասարանում: Իբրև հետազոտության խնդիրներ մենք առաջադրել ենք՝ ուսումնասիրել մեր հետազոտական թեմայի շուրջ առկա մասնագիտական գրականությունը, միջին դասարանների չափորոշիչները և անգլերենի

առարկայական ծրագիրը, ներկայացնել VII դասարանում նախագծային գործունեության ծավալման հնարավորությունները և կոնկրետ օրինակները, որոնք մենք արդեն ունեինք: Պարզել նախագծային գործնեության դերը VII դասարանցիների ստեղծագործական,համագործակցային, ճանաչողական կարողությունների և արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Մշակել աշխատանքային պլան, որով առաջնորդվելով կարելի է իրականացնել հաջողված նախագիծ: Մեր ուսումնասիրություններն իրականացրել ենք Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի VII դասարանի աշակերտների շրջանում:

ԳԼՈՒԽ 1
Ի՞ՆՉ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ըստ Հայնեսի (1989) «Նախագծերը բազմաբնույթ աշխատանքներ են, որոնք կենտրոնանում են առարկայի կամ թեմայի, այլ ոչ թե հատուկ լեզվական թիրախների վրա: Կարևոր նշանակություն ունի այն դերը, որը սովորողներն ունեն առարկայական թեմայի սկզբնական ընտրության եւ համապատասխան աշխատանքային մեթոդների հետ կապված որոշումների, նախագծի տևողության եւ վերջնական արդյունքի մեջ: Քանի որ հատուկ լեզվական նպատակներ նախատեսված չեն, ուստի սովորողներն իրենց ջանքերն ու ուշադրությունը կենտրոնացնում են համաձայնեցված նպատակին հասնելու վրա, նախագծային աշխատանքը սովորողներին հնարավորություն է տալիս վերամշակել նյութը կիրառելով լեզվական հմտություններն ու վերլուծական կարողությունները համեմատաբար բնական համատեքստում»:

Ըստ Լեգյութի և Թոմասի (1991) «Դա դասավանդման եւ ուսուցման թեման եւ խնդիրն է, որը արդյունք է բոլոր մասնակիցների միջեւ բանակցությունների համատեղ գործընթացի: Այն թույլ է տալիս ինքնուրույն գործողությունների լայն շրջանակ ինչպես անհատի, այնպես էլ սովորողների փոքր խմբի համար `ծրագրի ընդհանուր շրջանակներում, որը սահմանում է նպատակներն ու ընթացակարգերը: Նախագծի իրականացումը դինամիկ հավասարակշռությունն է գործընթացի եւ արտադրանքի միջեւ: Վերջապես, այն փորձարարական եւ ամբողջական է, քանի որ կամրջում է մարմնի եւ մտքի, տեսության եւ պրակտիկայի, փորձի եւ մտածողության երկակիությունը»:

Նախագծային ուսուցման իրականացման ընթացքում սովորողները միասին աշխատում են ընդհանուր նպատակի հասնելու, շոշափելի արդյունքի հասնելու համար, (օրինակ ` բրոշյուր, գրավոր զեկույց, տեղեկագրերի տախտակի ցուցադրում, տեսանյութ, հոդված դպրոցական թերթի համար, եւ այլն):
Հայնեսը (1989) նշում է չորս տեսակի նախագծեր ` *տեղեկատվական եւ հետազոտական, հետազոտական*, *արտադրական և կատարողական կազմակերպչական:* Չնայած տարբերություններին, վերոնշյալ բոլոր նախագծերն

ունեն հետևյալ ընդհանրությունը՝ շեշտը դրվում է սովորողների ներգրավվածության, համագործակցության եւ պատասխանատվության վրա:

Նախագծային ուսուցման առանձնահատկությունները

- այն աշակերտակենտրոն է
- ավելի համագործակցային է, քան մրցակցային
- հիմնված է հմտությունների վրա
- թույլ է տալիս սովորողին սովորել խմբի ներսում գտնվող այլ սովորողներից
- ենթադրում է միջառարկայական կապ, թույլ է տալիս բոլոր տեսակի շփումներ այլ առարկաների հետ
- կապված է իրականության հետ
- սովորողներին հնարավորություն է տալիս «սովորել» գործելու միջոցով եւ սովորել, թե ինչպես սովորել, քանի որ նրանք պետք է պլանավորեն իրենց աշխատանքը, որը բխում է իրենց կարողություններից և հմտություններից

Մենք մշակել ենք բնութագիչների ցանկ, որը կարող է հստակ բարձրացնել անգլերենի դասավանդման և ուսումնառության նախագծային մեթոդի առավելությունը: Ըստ այդմ նախագծային աշխատանքը պետք է լինի.

1. հետաքրքիր /թեման, ուսուցչի մոտեցումն ու վերաբերմունքը/

2. արդյունավետ /վերջնական նպատակը այս կամ այն կերպ ապահովում է նախատեսվող արդյունքը/

3. Ակտիվ /սովորողները ինքնուրույն աշխատում են և սովորում: Այն նաեւ համագործակցային է (ինտերակտիվ) և աշակերտակենտրոն: Աշակերտները նախագծի «բաղադրատոմսի» հիմնական «բաղադրիչն» են:

4. Համատեղ / սովորողի և դպրոցի համար/: Այն պետք է համապատասխանի աշակերտի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին:
5. Ինտեգրատիվ /ներառյալ լեզվական չորս հմտությունները, հաղորդակցման հմտությունները, տեղեկատվական հմտությունները, խմբային հմտությունները, անհատական հմտությունները և ուսուցման ու նախաձեռնողականության հմտությունները.

6.Շոշափելի /աշխատանքը պետք է ուղղված լինի մարտահրավերների հաղթահարմանը և շոշափելի արդյունք ապահովի/

7.Օգտակար. սովորողի, ուսուցչի և ուսումնական հաստատության համար: Վերջնական արդյունքի մեծ մասը կարող է օգտագործվել որպես հետագա «քարեր» ապագա ծրագրերի համար

8. Մոտիվացնող և ճկուն

Փուլերը

Նախագծի իրագործումը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի՝ *պլանավորում, իրականացում* և *գնահատում:*

- ***Պլանավորում***

1. Այս փուլում կարևոր է ուսուցչի հնարամտությունը, թեմաների ընտրությունը, մատուցման ձևը, նոր գաղափարներ ներմուծելը և մոտիվացնելը:
2. Կանոնների քննարկումը և գործողությունների ընթացքի մշակումը (օրինակ. որ աշխատանքների մեծ մասը պետք է իրականացվի անգլերենով)
3. Սովորողների նախապատրաստում. Անհրաժեշտ է, որ սովորողները որոշակի պատկերացում ունենան օտարալեզու նյութի ընտրության, մշակման և խմբագրման մասին: Ուսուցիչը պետք է կարողանա ուղղորդել, սովորեցնել գրագետ օգտվել բառարաններից, էլեկտրոնային նյութերից և պաշարներից: Նրանց քաջալերել կարճ բանակցություններ վարել, հարցաթերթիկներ գրել, հարցազրույցներ, հարցումներ իրականացնել և այլն:
4. Իսկ ամենակաևորը, անհրաժեշտ է բաց լինել ցանակացած հարցում աջակցելու, ուղղորդելու, ինչպես նաև հաշվի առնելու աշակերտի կարծիքը, դատողություններն ու գաղափարները:

- ***Իրականացում***

Նախագծային աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է նախապես մշակել գործողությունների քայլաշար.

- թեմայի ընտրություն
- խմբային քննարկում
- պլան. իրականացվող գործողությունների հաջորդական ցանկ
- ժամանակացույց
- անհրաժեշտ նյութերի ցանկ
- աշխատանքի բաշխում

- իրագործում/ արդյունք
- նախապաշտպանություն
- պաշտպանություն

- ***Գնահատում***

Ինքնագնահատում.

Սովորողները մեկնաբանում և գնահատում են իրենց կատարած աշխատանքը, առաջացած խնդիրները և իրենց կողմից տրված լուծումները, ինչպես նաեւ արդյունքները: Նրանք կարող են նաեւ կազմել և լրացնել իրենց ինքնագնահատման թերթիկները, փնտրել սխալներ, ուղղել դրանք և վերլուծել, թե ինչու են սխալվել, թերացել կամ վրիպել:

Փոխադարձ գնահատում.

Սովորողները ուսումնասիրում են համադասարանցիների աշխատանքը և օրինակ կազմում գնահատման սանդղակներ, հայտնում կարծիքներ և այլն:

Ուսուցչի գնահատում.

Ուսուցիչը վերլուծում է կատարված աշխատանքը, ռազմավարությունն ու խնդիրները, հավաքում, դասակարգում և ըստ նախապես մշակված գնահատման սանդղակի, իրականացնում է ամբողջական/վերջնական աշխատանքի խմբային գնահատում:

Նախագծային ուսուցման առավելությունները

Հայնեսը նշում է սովորողների համար հետևյալ կարեւոր առավելությունները.

Կապ իրականության հետ. Նախագծային աշխատնաքը կապ է ստեղծում իրական աշխարհի հետ, քանզի սովորողները կարողանում են կիրառել եւ հարմարեցնել իրենց ունեցած տեսական գիտելիքները գործնականում արդյունքի հասնելու և վերլուծություններ ու եզրահանգումներ անելու համար: Ինչու ոչ, նաև երևակայել և ազատ ստեղծագործել ընտրված թեմային համապատասխան:

Նախագծերը մասնակցային աշխատանքներ են. Ուստի սովորողների ներգրավվածությունը թեմայի վերաբերյալ ընտրություն կատարելիս և որոշումներ կայացնելիս հակված է բարձրացնել նրանց մոտիվացիան եւ հետաքրքրությունը:

Դրանք լավագույնս խթանում են աշակերտների կարողունակությունների զարգացմանը.

Հնարավորություն են տալիս տարբեր կարողություններով սովորողներին *համագործակցել* կարևոր խնդիրների լուծման հասնելու ճանապարհին:

Նախագծային աշխատանքների մեծ մասը ներառում է նաև հետեւյալ ոչ լեզվական բաղադրիչները, որոնք լրացուցիչ անհրաժեշտ է նախատեսել և կիրառել վերջնական արդյունքի պատրաստման և ներկայացման փուլում.

Ձևավորում կամ դիզայն (թռուցիկներ, բուկլետներ, պաստառներ և այլն)

Պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, տեսանյութեր)

Սարքավորումներ (տեսախցիկներ, ձայնագրող սարքեր, սմարթ հեռախոս, համակարգիչ և այլն)

Այսպիսով նախագծային աշխատանքի իրականացման ողջ գործընթացում սովորողներն անընդհատ սովորում են և զարգացնում վերլուծական մտածողությունը: Նրանք ստեղծում են գործիքներ, մշակում, համեմատում, վերլուծում, համադրում և ամփոփում օտար լեզվով տեղեկությունը: Բարելավում են իրենց սոցիալականացման հմտությունները: Կատարում են բազմաթիվ լեզվական աշխատանքներ՝ գործնականում կիրառում են լեզվական բոլոր չորս հմտությունները. խոսում են, կարդում, լսում և գրում:

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ VII ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Նախագծային ուսուցումը Ժամանակակից կրթական համակարգի անբաժանելի բաղադրիչ է, որն անգլերենի ուսուցման գործընթացում կարևորվել և մեր կողմից իրականացվել է որպես կրթական ծրագրի անբաժանելի մաս, սկսած 2021 թվականից: Անգլերենով բազմաթիվ նախագծային աշխատանքներ ենք իրականացրել զանազան թեմաներով, միջառարկայական և վերառարկայական կապերի վերհանմամբ: Աշխատանքի արդյունքում աշակերտները իրենց մեջ բացահայտել և զարգացրել են մի շարք հմտություններ և կարողունակություններ: Իրականացնել նախագիծ մայրենի լեզվով մի բան է, իսկ օտար լեզվով բոլորովին այլ: Մենք կարողացել ենք գրագետ և ճիշտ համագործակցության արդյունքում հասնել ակնկալվող վերջնարդյունքներին: Նախապես մշակված թեմաները քննարկել և վերջնական ընտրություն ենք կատարել, ձևավորել ենք խմբեր, իրականացրել աշխատանքի համաչափ բաշխում: Նախանշել ենք ողջամիտ ժամկետներ և մշակված ժամանակացույցին համապատասխան իրականացրել անհրաժեշտ նյութերի հավաքագրում, մշակում և խմբագրում, անցկացրել ենք հարցումներ, հարցազրույցներ և այլն: Վերջնական արդյունքը ներկայացրել ենք պաշտպանության և իրականացրել խմբային և անհատական գնահատում:

Սույն հետազոտական աշխատանքի թեման ավելի շոշափելի և պատկերավոր ներկայացնելու համար երկրորդ գլխում զետեղել ենք 2020-2022թթ. ընթացքում անգլերեն առարկայից VII դասարանում իրականացված հետազոտական աշխատանքների մի քանի օրինակներ, հետևյալ թեմաներով՝ «Յուրաքանչյուր աշակերտ պետք է առնվազն երեք օտար լեզու ուսումնասիրի», «Ոչ խոսքային ողջույնի ձևերը տարբեր մշակույթներում», «Կրթությունը և ԿՈՎԻԴ-19-ը. մարտահրավերներն ու հնարավորությունները հայ ուսուցիչների և աշակերտների համար»:

Ստորև ներկայացված են նախագծային աշխատանքների սահիկաշարերը պատկերներով:

Սահիկ 1

Each student should learn at least 3 foreign languages
Group project:
Nare Aghagulyan
Nare Antaplyan
GRADE: VII

1. 2.

REASONS FOR LEARNING FOREIGN LANGUAGES
One of the most practical ways to make use of your spare time nowadays is to start learning a new skill
LANGUAGE
In addition to learning a new foreign vocabulary, you will develop your native vocabulary


Whether you travelling abroad or doing business with someone abroad over the phone, the ability to communicate is essential
Studies have shown that learning another language fosters culture awareness and acceptance

3. 4.

4. Boost your confidence
Any language learner can attest to making his or her share of mistakes while discovering a new language-often in front of an audience.
3.Become a Polyglot
Learning a second language improves communication skills and multiplies the vocabulary of the first language.
LANGUAGE

5.


HERE ARE TOP SIX BENEFITS OF LEARNING LANGUAGES
1. See the World
Traveling as a speaker of the local language can revolutionize a trip abroad.
LANGUAGE
2. Go to the Source
In a world of more than 6000 spoken languages, we sometimes require translation

6.

5. Strengthen your Decision making
Studies show that decision made in your second language are more more reason-driver than those made in your native language.
LANGUAGE
6.Gain Perspective
As we explore a new language and culture, we naturally draw comparisons to what is most familiar.

7.

In comprehensive schools of our country, two foreign languages are taught: English and Russian. There are schools where you can study French or German.
We want Turkish language to be taught in all schools of our country. We quite agree with the famous term that "you should know the language of your enemy".

8

9.

10.

11.

12.

Սահիկ 2

PROJECT WORK
Non-verbal greetings in different cultures

Teacher: G. Harutyunyan
Student: Panosyan Gagik
Grade VII

1.

What is non-verbal communication?

Non-verbal communication is communication that occurs without words which is continuous. It is body language and environmental context involved in any communication. It is not what is said with words but how it is said and expressed. There are many types of non-verbal communications like eye contact, handshakes, facial expressions, touch, gestures, etc.

2.



3.

Let's compare

4.

Put your hand on your heart
Malaysia

It's very formal, but this traditional Malaysian greeting has a particularly lovely sentiment behind it.

5.

Arab men greet each other by rubbing noses

6.

In India, people greet each other with the Añjali Mudrā salute. People press their palms together over their heart and say "Namaste."

7.

People in Tibet, thought that the king had been reborn, so to prove they weren't the king, they would show their tongues. The traditional greeting is now a form of respect.

8.

In the **Yoruba (West Africa)** culture it is custom to "greet" your elders in the proper manner. For males they must "do ba le" or prostrate and for females they must go on their knees or "curtsy".

9.

In Kenya and Tanzania spit is a traditional type of greeting
They show their respect by spitting at each other.

10.

Formal way to greet each other with bow in Japan

11.

In Thailand people greet each other with Wai

11.

People in Zealand greet each other with Hongi

12.

12.

13.

13.

15.

Սահիկ 3

1.

2.



3.

4.


Encourgaing student`s independent learning

5.

Enhacing teacher`s digital skills

6.

Conclusion
Challenges
Opportunities

7.


COVID 19
COVID-19 : STAY POSITIVE !
I prefer to be negative...

8.

CONCLUSION!
EDUCATION
STUDENTS
COVID 19
TEACHERS

9.

THANK YOU!

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձը ցույց տվեց, որ նախագծային ուսուցմամբ հետազոտական աշխատանքի արդյունքում ակնհայտորեն զարգանում են աշակերտի ընդհանուր ուսումնական կարողությունները, բացահայտվում են տարբեր հմտություններն ու ունակությունները, որոնք գուցե մինչ այդ բացահայտված չէին: Զարգանում է համագործակցային կարողությունը զանազան խբային աշխատանքներ կատարելիս, քննարկումներ և ինքնուրույն դատողություններ անելիս, միմյանց կարծիքը լսելիս և այլն:

Աշակերտները ազատ են ստեղծագործելու, միջառարկայական կապերի միջոցով նորանոր բացահայտումներ անելու:

Ելնելով միջին դպրոցում վերջին 2-3 տարիների ընթացքում իրականացրած նախագծային աշխատանքների մեր հաջողված և արդյունավետ փորձից, կարող ենք փաստել, որ թեմայի ճիշտ ընտրության, ուսուցչի գրագետ ուղղորդման և մոտիվացման միջոցով կարելի է հաջող նախագծային աշխատանք իրականացնել: Ինչի արդյունքում աշակերտի մոտ կձևավորվեն, կզարգանան և կամրապնդվեն սովորել սովորելու կարողությունը, վերլուծական մտածողությունը, ժամանակակից տեխնոլոգիաների ազատ կիրառումը, իր առջև դրված խնդիրներին կշռադատված, ինչու ոչ, նաև հնարամիտ լուծումներ գտնելը: Փաստենք նաև, որ այն աշակերտները, որոնք արդեն իրականացրել են նախագծային աշխատանք անգլերեն առարկայից, այսօր էլ ավելի մոտիվացված են, պատրաստակամ և նախաձեռնող նոր թեմաների ընտրության և նոր աշխատանքի իրականացման հարցում:

Այսպիսով՝ քանի որ նախագծային աշխատանքի կազմակերպումը և իրականացումը լիովին համապատասխանում է մեր կրթական համակարգի կողմից որդեգրված և սահմանված ուղենիշներին, ելնելով սեփական փորձից, կփաստենք, որ օտար լեզվի ուսուցման շրջանակներում իսկապես արդյունավետ է իրականացնել նախագիծ:

Աշակերտին տրվում է հնարավորություն փնտրելու, գտնելու և մշակելու օտարալեզու նյութերը՝ հիմնվելով ունեցած լեզվական կարողությունների վրա: Անում է դատողություններ, վերլուծություններ, դիմակայում իր իսկ աշխատանքի ընթացքում առաջացած մարտահրավերներին և ի վերջո հասնում նպատակադրված վերջնարդյունքին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Անտարես, Երևան 2012թ
2. Գյուլիմիրյան Ջ. Խմբային աշխատանքը որպես ստեղծագործական – հետազոտական ուղղվածության ապահովման միջոց, իրականացման մեթոդիկան: «Նախաշավիղ» 2001թ.

3. Ribé,R. & Vidal,N. (1993): Project Work Step by Step.Oxford: Heinemann.
4. Haines,S.(1989):Projects for the EFL Classroom. Wiltshire (UK):Nelson
5. Fried-Booth,D.L. (1986): Project Work.Oxford:OUP
6. Legutke & Thomas (1991): Process and experience in the Language Classroom. Harlow:Longman

Հղումներ՝

7. https://www.pardesschool.org/8-great-benefits-of-project-based-learning/
8. https://www.teachingenglish.org.uk/professional-development/teachers/knowing-subject/n-p/project-work
9. https://ncert.nic.in/pdf/publication/sciencelaboratorymanuals/classX/science/jelm106.pdf